

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ  
ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ԳՆՄԱՆ

N ՀԿ-ԲՄԾՁԲ-26/01

ք.Երևան

«16» 02 2026թ.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ն.Հարությունյանի, որը գործում է Հնկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, մի կողմից, և ՀՀ-ում «Միներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղը, ի դեմս տնօրեն Ա.Ստեփանյանի, որը գործում է Հնկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրաէներգետիկական Շուկայի Կառավարման Շրագրի սպասարկման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

#### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

#### **2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **93 276 000 (իննսուներեք միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ  
ք. Երևան, Արշակունյաց փող. շ. 27  
ՀՎՀՀ 01544167  
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1930000600150100

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ-ում «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղ  
ք. Երևան, Նորք-Մարաշ, Արմենակ Արմենակյան 2/4  
ՀՎՀՀ 01534707  
«Արդշինբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2470094672070000

Ն.Հարությունյան



Կ.Տ

Ա. Ստեփանյան



Կ.Տ

Հավելված N 1

16.02. 2026 թ. կնքված  
ՀԿ-ԲՄԾՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության                                        |                                                                                                  |                                                 |                   |                           |                     |                                      |                                                                                                                                                |
|----------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------|-------------------|---------------------------|---------------------|--------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| հրավերով<br>նախատես-<br>ված<br>չափաբաժնի<br>համարը | գնումների<br>պլանով<br>նախատեսվա-<br>ծ միջանցիկ<br>ծածկագիրը՝<br>ըստ ԳՄԱ<br>դասակարգման<br>(CPV) | տեխնիկական<br>բնութագիրը                        | չափման<br>միավորը | ընդհանուր<br>գինը/ՀՀ դրամ | ընդհանուր<br>քանակը | մատուցման                            |                                                                                                                                                |
|                                                    |                                                                                                  |                                                 |                   |                           |                     | հասցեն                               | Ժամկետը**                                                                                                                                      |
| 1                                                  | 72261160                                                                                         | Ներկայացված է<br>Հավելված N 1.1-<br>ով, կցված է | հատ               | 93 276 000                | 1                   | ք. Երևան<br>Արուսյան 27<br>3-րդ հարկ | Պայմանագրի<br>ուժի մեջ<br>մտնելուց 20<br>օրացուցային<br>օրվա<br>ընթացքում -<br>2026թ. մարտի 1-<br>ից մինչև 2027թ.<br>փետրվարի 28-ը<br>ներառյալ |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ  
ք. Երևան, Արուսյան փող. 2. 27  
ՀՎՀՀ 01544167  
«Կոնվերս քանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1930000600150100

ՀՀ-ում «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթըմզ» ԲԸ մասնաճյուղ  
ք. Երևան, Նորք-Մարաշ, Արմենակ Արմենակյան 2/4  
ՀՎՀՀ 01534707  
«Արդշինքանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2470094672070000



Ն. Հարությունյան

Կ.Տ

Ա. Ստեփանյան

Կ.Տ



## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

### Ծառայությունների նկարագրություն

Սպասարկման ծառայություններն ամրագրված կլինեն «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի և Սպասարկող ընկերության միջև կնքված ծառայությունների մատուցման մասին պայմանագրով: Պայմանագրում սահմանված դրույթները կներառեն տեխնիկական սպասարկման պահանջվող մակարդակների, խնդիրների լուծման առաջնահերթության, տվյալների արխիվացման հաճախականության, խնդիրների արձագանքելու ժամկետների նկարագրությունը:

Սպասարկող ընկերությունը պետք է իրականացնի Շուկայի կառավարման ծրագրի «Հաշվետվություններ» հարթակի կառավարման և հաշվետվությունների նոր ձևաչափերի ստեղծման, ինչպես նաև Շուկայի կառավարման ծրագրի շահագործման անվտանգության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

Սպասարկող ընկերությունը պետք է հնարավորություն ունենա սպասարկման ընթացում լուծել Intelligent Data Manager (IDM) ծրագրային ապահովման տեխնոլոգիական հարթակի հետ կապված խնդիրներ և ունենա փոփոխություններ կատարելու իրավունք, որի հեղինակային իրավունքները պատկանում են Սիներջի Ինթերնեյշնլ Սիսթեմզ Ինկ. ընկերությանը:

Մատուցվելիք ծառայությունները ներառում են՝

- ծրագրի Hosting ապահովող սարքավորումների ծրագրային սպասարկում\*,
- ծրագրի աջակցություն և տեխնիկական սպասարկում,
- մշակման ծառայություններ:

\* Ծրագրի Hosting, ներառյալ սարքաշարի մշտադիտարկումը պետք է իրականացվի «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից: Մշտադիտարկման արդյունքները պետք է փոխանցվեն սպասարկող ընկերությանը խորհրդատվության և իրենց լիազորությունների շրջանակում հետագա շտկումների նպատակով: Ծրագրի Hosting-ը ապահովող ծրագրային սպասարկումը, ներառյալ, սարքավորումները և սերվերների firmware update/bios update -ները կատարում է սպասարկող ընկերությունը:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հիմնական կատարողական ցուցիչների մշտադիտարկում, ներառյալ՝

- տվյալների պահպանում,
- ցանցի թողունակություն,
- CPU-ի օգտագործում,
- հիշողության օգտագործում:

Սպասարկող ընկերությունը պետք է տրամադրի գործարկված ծրագրի հիմնական, թեսթային, ուսումնական և պահուստային (DR) համակարգերի տեխնիկական սպասարկման ամբողջական փաթեթ, որը կներառի հետևյալը.

▪ **Թերությունները շտկող տեխնիկական սպասարկում.** Ծրագրային սխալների վերացման և շտկման աշխատանքների իրականացում, համակարգում հայտնաբերված անսարքություններին (եթե այդպիսիք կան) արձագանքելու և դրանք շտկելու համար անհրաժեշտ տեխնիկական տեղեկատվության տրամադրում:

▪ **Փոքրածավալ փոփոխություններ.** փոքրածավալ են համարվում ՇԿԾ այն փոփոխությունները, որոնց իրականացման համար պահանջվում է՝

Գործառնական խնդիրներ, որոնք առաջանում են «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի մասնագետների կողմից ամենօրյա սպասարկման ընթացքում. ընթացիկ տեխնիկական խնդիրներ, ծրագրային ապահովման ֆունկցիոնալության և կազմաձևման խնդիրներ, ծրագրային ապահովման և հավելվածների կառուցվածք, հարթակի առանձնահատկություններ:

Փոքրածավալ փոփոխությունների օրինակներ են՝

- Նոր դաշտի ավելացում տվյալների մուտքագրման գոյություն ունեցող ձևում
- Նոր արտածման ավելացում արտահանման գոյություն ունեցող ձևանմուշում,
- դաշտի վավերականության փոփոխություն (օրինակ՝ պարտադիր կամ այլընտրանքային, թվային կամ տառաթվային),
- Նոր զտիչների սահմանում և գոյություն ունեցող թույլտվություններին փոփոխություն,
- Նոր հաշվետվությունների (աղյուսակներ և գծապատկերներ) կազմում, որոնք ենթադրում են նոր չափումների ստեղծում համակարգում առկա տվյալակազմից,
- Նոր կատեգորիաների ավելացում,
- ծանուցումների կազմաձևում,
- գոյություն ունեցող բիզնես գործընթացների փոփոխություն՝ առանց առկա բիզնես գործընթացներում և կանոններում առանցքային փոփոխություններ կատարելու

▪ **Ծրագրային թարմացումներ.** Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոններում և այլ իրավական ակտերում փոփոխություններին համապատասխան ծրագրային փոփոխությունների իրականացում ծրագրի թեստային միջավայրում, որը “Հաշվարկային կենտրոն” ՓԲԸ-ի կողմից ծրագրային վերաստուգում անցնելուց և գրավոր դրական պատասխանից հետո միայն թարմացման կենթարկվի ծրագրի հիմնական, ուսումնական և պահուստային միջավայրերում: Անհրաժեշտության դեպքում հիմնական միջավայրից տվյալների բազայի տեղափոխում թեստային միջավայր:

▪ **Կանխարգելիչ սպասարկում.** անվտանգության խափանման մասին նախազգուշացումներ և վճռորոշ շտկումներ/թարմացումներ:

Պարբերական կանխարգելիչ սպասարկում Սպասարկող ընկերության մասնագետների կողմից՝ ընթացիկ ծրագրաշարի ակտիվ ստուգում, թաքսված խնդիրների ժամանակին հայտնաբերում, վթարի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցների ձեռնարկում և կայուն շահագործման ապահովում:

**Պարբերական կանխարգելիչ սպասարկում.** ընթացիկ ծրագրաշարի ակտիվ ստուգում, թաքսված խնդիրների ժամանակին հայտնաբերում, վթարի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկում և կայուն շահագործման ապահովում:

▪ **Տեխնիկական սպասարկում արտակարգ իրավիճակներում.** արտակարգ իրավիճակներում ծրագրի բնականոն աշխատանքի ապահովմանն ուղղված խորհրդատվություն կառավարման ծրագրով, հեռախոսով կամ էլ. փոստով

▪ **Ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկում.** Ծրագրային ապահովման և գործառնական համակարգի նոր տարբերակների տրամադրում, համակարգի բաղկացուցիչների թարմացում:

▪ **Ծրագրի մշտադիտարկում.** ծրագրի բնականոն աշխատանքի մշտադիտարկում: Մշտադիտարկման համապարփակ գործիքակազմը թույլ կտա դիտարկել ծրագրի բնականոն աշխատանքի տարբեր կողմերը և իրականացնել խափանումների կանխարգելմանն ուղղված ստուգումներ: Գործիքակազմը ապահովում է ներքին մշտադիտարկում ծրագրի Microservice ճարտարապետության մեջ յուրաքանչյուր մոդուլյար ծառայության համար առանձին: Սա չի ներառում սարքավորումների մշտադիտարկում: Մշտադիտարկման տվյալների հավաքագրման ու վերլուծության համար օգտագործվում են հետևյալ լուծումները՝

- Prometheus (<https://prometheus.io/>)
- Prometheus Exporters
- Elastic search (<http://www.elastic.co/products/elasticsearch>)

և հետևյալ գործիքները՝

- JMX to Prometheus exporter ([https://github.com/prometheus/jmx\\_exporter](https://github.com/prometheus/jmx_exporter)),
- Filebeat to elasticsearch (<http://www.elastic.co/products/beats/filebeat>),
- Logstash (<http://www.elastic.co/products/logstash>);
- Տվյալների տեսողականացման և արտապատկերման համար օգտագործվում են՝
- Grafana (<https://grafana.com/>),
- Kibana (<http://www.elastic.co/products/kibana>):

Այլ տվյալների շտեմարանի մշտադիտարկում և կարգավորում, տվյալների որակի վերանայում, արդյունքների մասին հաշվետվություններ, արտոնագրի թարմացումներ և տեխնիկական սպասարկման այլ աշխատանքներ և հաշվետվություններ, որոնք կապահովեն ծրագրի բնականոն և արդյունավետ աշխատանքը:

### **Ժամանակավոր աջակցության պլան տեխնիկական սպասարկման ժամանակաշրջանի համար**

Սպասարկող ընկերությունը պետք է ապահովի աջակցության եռամսյակային մոդել: Դիմումի տեսակով և բարդությամբ պայմանավորված՝ այն կարող է դիտարկվել բոլոր երեք մակարդակներում՝ Նախքան լուծում ստանալը: Օգտատերերը հնարավորություն կունենան գրանցելու աջակցություն պահանջող դիմումները խնդիրների գրանցման ծրագրում, որը յուրաքանչյուր դիմումի համար կստեղծի առանձին գրառում և այդ գրառմանը նույնականացման համարը կկցի՝ խնդրի լուծման ընթացքին հեշտությամբ հետևելու համար:

Սպասարկող ընկերության պատասխանատուն կլինի խնդիրը համապատասխան Նախագծի խնդիրների ցանկում (Project Issue Log) մուտքագրելու, ինչպես նաև դրա լուծման գործընթացին հետևելու համար: Նախագծի խնդիրների ցանկը կվերանայվի Նախագծի կարգավիճակի ճշտմանն ու Նախագծի Սպասարկող ընկերության աշխատանքների վերահսկմանն ուղղված հանդիպումների ժամանակ: Առկա խնդիրը լուծելու համար հանձնարարական կտրվի համապատասխան մասնագետին: Տեխնիկական սպասարկման թիմը կորոշի խնդրի առաջնահերթությունը և խնդիրը կուղղորդի Նախագծի ղեկավարին, եթե այն խիստ առաջնահերթ է:

### **I մակարդակ. Աջակցության ծառայության աշխատակիցների կողմից առաջարկվող լուծում (Basic Help Desk Resolution)**

Տեխնիկական սպասարկման առաջին մակարդակում գործող մասնագետները («Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի ՇԿԾ-ին կցված աջակցության ծառայության աշխատակիցները) պատասխանատու կլինեն պարզագույն խնդիրների լուծման համար, օրինակ՝ ծրագրից օգտվելու հետ կապված խնդիրներ, պարզ հարցերի պատասխաններ, ցանցային և SS միջամտություն պահանջող խնդիրներ: Եթե խնդիրը լուծվում է այս մակարդակում, տեխնիկական սպասարկման առաջին մակարդակում գործող մասնագետները փակում են դիմումը և թարմացնում դիմումի կարգավիճակը: Դիմումը փակելուց հետո համապատասխանաբար թարմացվում է գիտելիքների շտեմարանը: Այս մակարդակում խնդրի կարգավորման անհնարինության դեպքում տեխնիկական սպասարկման առաջին մակարդակում գործող մասնագետները խնդիրը տեղափոխում է հաջորդ մակարդակ:

### **II մակարդակ. Մանսագիտացած տեխնիկական աջակցություն (In-depth Technical Support)**

Տեխնիկական սպասարկման երկրորդ մակարդակում Սպասարկողի տեխնիկական աջակցության թիմը կարգավորում և լուծում է այն խնդիրները, որոնք տեղափոխվել են առաջին մակարդակից:

Միջին մակարդակի աջակցության մասնագետը անմիջապես տեղեկանում է նոր խնդիրների մասին, ուսումնասիրում դրանք և պարզում դրանց առաջացման հիմնական պատճառները՝ օգտվելով ծրագրի Նախագծից, կոդերից կամ տեխնիկական նկարագրից:

Եթե դիմումը ճանաչվել է որպես առանձնակի բարդ խնդիր կամ ծրագրային սխալ, որ հնարավոր է լուծել այս մակարդակում, միջին մակարդակի աջակցության մասնագետը վերացնում է

խնդիրը կակ սխալը և փակում դիմումը: Խնդրի լուծումից հետո դիմումը փակվում է և այդ մասին ծանուցում է ուղարկվում ներգրավված բոլոր շահառուներին ինչպես Սպասարկող ընկերությունում, այնպես էլ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ում:

Եթե դիմումը ճանաչվել է որպես առանձնակի բարդ խնդիր կամ ծրագրային սխալ, որ հնարավոր է լուծել այս մակարդակում, ապա մասնագետը կատարում է համապատասխան շտկումը և փակում է այն: Լուծումից հետո խնդրի կարգավիճակը թարմացվում է, որի մասին տեղեկություն է տրամադրվում բոլոր շահագրգիռ կողմերին:

Այս մակարդակում խնդրի կարգավորման անհնարինության դեպքում տեխնիկական սպասարկման երկրորդ մակարդակում գործող մասնագետները խնդիրը տեղափոխում են երրորդ մակարդակ:

### **III մակարդակ. Ապրանքների և ծառայությունների փորձագիտական աջակցություն (Expert Product and Service Support)**

Եթե բարձրացված խնդիրը վերաբերում է ծրագրում նոր գործառույթների մշակմանը, առկա գործառույթներում փոփոխություններ կատարելուն կամ Սպասարկողի կողմից շտկման ենթակա ծրագրային սխալին, խնդիրը փոխանցվում է ծրագրի ղեկավարին հետագա գործողությունների համար:

Ծրագրի ղեկավարը խնդրի լուծումը կամ փոփոխությունների իրականացումը համաձայնեցնում է ծրագրի տեխնիկական թիմի և պրոդուկտի ղեկավարի հետ:

Խնդրի լուծումը և առաջնահերթությունը ներգրավված շահառուների (ծրագրի տեխնիկական թիմ, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի աջակցության ծառայության աշխատակիցներ) հետ համաձայնեցնելուց հետո համապատասխան փոփոխությունները ներառվում են հետագա թողարկումներում, շտկումներում կամ ծրագրային ապահովման թարմացումներում:

### **Տեխնիկական սպասարկման ենթակա խնդիրների առաջնահերթության մակարդակներ**

Տեխնիկական սպասարկման ենթակա խնդիրներն ըստ առաջնահերթության ունենում են երեք մակարդակ.

**Բարձր (Ծայրահեղ).** Ծրագրի զգալի կամ ամբողջական խափանում, որը անհնարին է դարձնում դրանից օգտվելը: Ծրագրի կարևորագույն գործառույթները խափանված են: Առկա խնդիրները թույլ չեն տալիս իրականացնել առօրե վաճառքի գործառույթներ: Այս մակարդակի մեջ է մտնում նաև թեստային միջավայրից մյուս միջավայրերի ծրագրային թարմացումների տեղափոխումից անմիջապես հետո տեղափոխման թերությունների հայտնաբերումը:

**Միջին.** սահմանափակ կամ աննշան խափանում: Սահմանափակ քանակով կամ երկրորդական գործառույթները խափանված են: Կարևորագույն գործառույթները խափանված չեն: Բիզնես գործառույթները շարունակում են իրականացվել:

**Ցածր.** խափանումներ չկան: Առաջացած խնդիրը չի ազդում ծրագրի կարևորագույն գործառույթների վրա:

### **Տեխնիկական աջակցության թիմի արձագանքման ժամկետներ**

Սպասարկող ընկերությունը պետք է օգտագործի իր բոլոր ջանքերը՝ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի (հաճախորդի) կողմից բարձրացված խնդիրներին ժամանակին և պատշաճ կերպով արձագանքելու և դրանք լուծելու համար: Մասնավորապես, ծառայություն մատուցողը պատշաճ կերպով կարձագանքի Հաճախորդի կողմից ներկայացված պահանջներին և հարցումներին հետևյալ ժամկետներում.

- 1 ժամվա ընթացքում, եթե բարձրացված խնդիրը առաջնահերթության բարձր (ծայրահեղ) մակարդակի է
- 2-8 ժամվա ընթացքում, եթե բարձրացված խնդիրը առաջնահերթության միջին մակարդակի է
- 1-3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բարձրացված խնդիրը առաջնահերթության ցածր մակարդակի է կամ ծրագրում փոփոխության կատարելու հարցում է:

Սպասարկող ընկերության տեխնիկական աջակցության էլ. փոստը հասանելի է 24/7 ռեժիմով: Պատվիրատուն պետք է նամակի «Թեմա» դաշտում գրի համակարգի անվանումը և «առաջնահերթության բարձր մակարդակ», «առաջնահերթության միջին մակարդակ» կամ

«առաջնահերթության ցածր մակարդակ» / «ծրագրում փոփոխության հայտ» բառերը: Հաճախորդը պատասխանը կստանա՝ համաձայն իր նշած առաջնահերթության: Արձագանքման ժամկետի մեկնարկը տրվում է հաճախորդի կողմից էլ.փոստով, հեռախոսով / համաձայնեցված է երկու կողմերի կողմից՝ մենսեջերով կամ խնդիրների գրանցման համակարգով (հետևում է հայտերին հայտագրման պահից մինչև խնդրի լուծում) աջակցության հայտի ներկայացման պահից:

Համարվում է, որ ծառայություն մատուցողը արձագանքել է հաճախորդի հայտին, եթե պատասխան է ուղարկել հայտառուին: Պատասխանը կարող է լինել հարցի լուծում կամ լրացուցիչ տեղեկությունների տրամադրման պահանջ՝ ուղարկված էլ.փոստով կամ հեռախոսազանգի միջոցով:

### **խնդիրների լուծման առաջարկվող ժամկետներ**

Սպասարկող ընկերության տեխնիկական աջակցության թիմը պետք է տրամադրի առաջնահերթության բարձր մակարդակ ունեցող խնդիրների կարգավիճակի առնչվող հաճախակի թարմացումներ:

խնդիրները լուծելու ժամկետները.

- 4 ժամվա ընթացքում, եթե բարձրացված խնդիրն ունի Բարձր (Ծայրահեղ) առաջնահերթություն,
- 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բարձրացված խնդիրն ունի միջին առաջնահերթության մակարդակ,
- 15 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բարձրացված խնդիրը ցածր առաջնահերթություն է կամ ենթադրում է ծրագրային փոփոխություն:

### **Աջակցության ծառայության աշխատանքային ժամեր**

Սպասարկող ընկերությունը ծառայությունը պետք է մատուցի ամեն օր՝ Երևանի ժամանակով 08:00-20:00: Դիմումների արձագանքման ժամկետները կհաշվարկվեն՝ ելնելով հիշատակված ժամանակացույցից: Բացառությամբ թեստային, հիմնական և ուսումնական միջավայրերի թարմացումներից ամիջապես հետո հայտնաբերված թերությունների, որոնց վերացումը իրականացվում է թարմացման ավարտի ժամանակից հետո 3 ժամվա ընթացքում:

Համակարգի խափանման դեպքում (Բարձր(Ծայրահեղ) առաջնահերթություն) Սպասարկող ընկերությունը ծառայությունը պետք է մատուցի 7-օրյա ռեժիմով շաբաթական, օրական 24 ժամ:

### **Սպասարկող ընկերության տեխնիկական սպասարկման թիմը պետք է ունենա համապատասխան փորձի հիմնավորմամբ հետյալ մասնագետներ.**

- Oracle տվյալների բազայի մասնագետներ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,
- Java ծրագրավորման լեզվի մասնագետներ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով,
- PostgreSQL տվյալների բազայի մասնագետներ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,
- VMware վիրտուալիզացման համակարգի մասնագետներ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,
- Angular framework-ի մասնագետներ, ունենան առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,
- TypeScript ծրագրավորման լեզվի մասնագետներ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,
- Microservice architecture մասնագետներ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,
- DevOps մասնագետներ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով,
- շարունակական ինտեգրման CI/CD հիմունքների մասնագետներ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,
- Git տեխնոլոգիաների մասնագետներ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,
- SonicWall սարքավորումների հետ աշխատանքի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,
- Էլեկտրաբեռնաբեռնիկական մեծածախ շուկայի իմացություն և փորձ որն անհրաժեշտ է Շուկայի Կառավարման Ծրագրի (AEX MMS) սպասարկման և զարգացման համար,
- «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ իրացման բազայի «AlphaCenter», «Պիրամիդա» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ «AlphaCenter» ծրագրերն ինտեգրել գործող համակարգի հետ,
- տիրապետել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված կորուստների հաշվարկի մեթոդիկային,

- պետք է գերազանց տիրապետեն էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի բաղադրիչներին՝ ԵՐՊ, ԿՈՒՊ, ՉՈՒՊ, Օր-առաջ շուկա, հաշվեկշռման շուկա և այլն,
- էլեկտրաէներգետիկական ոլորտի որոշակի գիտելիքների իմացություն,
- սպասարկող ընկերությունը սպասարկման շրջանակներում պետք է իրականացնի կորուստների մոդուլի կատարելագործում,

Սպասարկող ընկերության տեխնիկական սպասարկման թիմի անմիջականորեն Շուկայի կառավարման ծրագիրը սպասարկող աշխատակիցները պետք է տիրապետեն շուկայի ալգորիթմի կառուցվածքի տրամաբանությանը

#### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

#### ԿԱՏԱՐՈՂ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ  
 ք. Երևան, Արվյան փող. շ. 27  
 ՀՎՀՀ 01544167  
 «Կոնվերս բանկ» ՓԲԸ  
 Հ/Հ 1930000600150100

ՀՀ-ում «Սիներգի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղ  
 ք. Երևան, Նորք-Մարաշ, Արմենակ Արմենակյան 2/4  
 ՀՎՀՀ 01534707  
 «Արդշինբանկ» ՓԲԸ  
 Հ/Հ 2470094672070000

Ն.Հարությունյան



Ա. Ստեփանյան



Հավելված N 2

16. 02. 2026 թ. կնքված  
ՀԿ-ԲՄԾՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ  
դրամ

| Ծառայության                                             |                                                                                                    |                                                                                              |                                                                                             |        |        |            |            |            |            |            |            |            |            |            |          |
|---------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------|--------|--------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|----------|
| հրավերով<br>նախատե-<br>սված<br>չափաբաժ-<br>նի<br>համարը | գնումների<br>պլանով<br>նախատեսվա-<br>ծ միջանցիկ<br>ծածկագիրը՝<br>ըստ ԳՄԱ<br>դասակարգմ-<br>ան (CPV) | անվանումը                                                                                    | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 և 2027 թթ-ին՝ ըստ<br>ամիսների, այդ թվում** |        |        |            |            |            |            |            |            |            |            |            |          |
|                                                         |                                                                                                    |                                                                                              | 2026թ.                                                                                      |        |        |            |            |            |            |            |            | 2027 թ.    |            |            | Ընդամենը |
|                                                         |                                                                                                    |                                                                                              | Ապրիլ                                                                                       | Մայիս  | Հունիս | Հուլիս     | Օգոստոս    | Սեպտեմբեր  | Հոկտեմբեր  | Նոյեմբեր   | Դեկտեմբեր  | Հունվար    | Փետրվար    | Մարտ       |          |
| 1                                                       | 72261160                                                                                           | Էլեկտրաէներ-<br>գետիկական<br>Շուկայի<br>Կառավարմա-<br>ն Ծրագրի<br>սպասարկման<br>ծառայություն | 773 000                                                                                     | 15 000 | 23 000 | 31 092 000 | 38 865 000 | 46 638 000 | 54 411 000 | 62 184 000 | 69 957 000 | 77 730 000 | 85 503 000 | 93 276 000 |          |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ  
ք. Երևան, Արմավյան փող. շ. 27  
ՀՎՀՀ 01544167  
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1930000600150100

ՀՀ-ում «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղ  
ք. Երևան, Նորք-Մարաշ, Արմենակ Արմենակյան 2/4  
ՀՎՀՀ 01534707  
«Արդշինբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2470094672070000

Ն. Հարությունյան

Ա. Ստեփանյան



Կ.Տ



Կ.Տ